ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН 7

Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար – ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵԴԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ..... 22

Vigen Tsatryan, Ruslan Kobzar – TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGTH OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES..... 22

Արգիշտի Վարդանյան – ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՀՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ..... 23

Аргишти Варданян – ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ 29

Argishti Vardanyan – A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY 29

Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ..... 30

Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ..... 38

Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....38

Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՌՈՄԻ ՊԻՈՒՍ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՁՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ..... 39

Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX 54

Feliks Movsisyan - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI'' ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER..... 55

Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....56

Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.) 72

Hovik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAKSUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905)..... 73

Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ. 74

Гаяне Оганнисян – ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. – В 1930-Х ГГ..... 82

Gayane Hovhannisyan – DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S – IN THE 1930S..... 83

Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.).....84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.). 89

Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994) 89

Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 90

Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ 95

Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY 95

Լիլիթ Մակարյան – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) 96

Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ) 103

Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS) 103

Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ ... 104

Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА 113

Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY 114

Էդգար Չախոյան – ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-2019 ԹԹ.) 115

Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.) 134

Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019) 135

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԶՆԻՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 136

Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.) 146

Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY) 147

Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻՍԻ ՓՆՏՐՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ 148

Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО. 155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-ՐԴ ԴԱՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԶԱՐԴԱՁԵՎԵՐԸ 156

Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА 164

Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES) 164

Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ 172

Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175

Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA "HOKTEMBER" IN GYUMRI 176

Զահրա Մալեքի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼՆԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՈՒԼԻԻ ԱՉՔԵՐՈՎ 177

Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187

Zahra Maleqi – HAFEZ'S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI 187

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 188

Марине Геворкян, Гаяне Товмасян – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ 199

Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ "ИСТОРИЯ АРМЕНИИ" КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ 204

Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSI'S "HISTORY OF THE ARMENIANS" 205

Վահագն Հակոբյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206

Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА 218

Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN'S LETTERS 218

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան - ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ) 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) 229

Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH) 229

Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 230

Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ 236

Meri Hovhannisyan - FEATURES OF USING THE DEBATE METHOD 236

Արմեն Խաչիկյան – ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 237

Армен Хачикян – ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА 246

Armen Khachikyan – MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES 246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷՋ: 247

ՀՈՎՆԱՆ ՁԱՆՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՋԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ, ԵՐ., ԷԴԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷՋ: 247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷՋ: 250

ՆՈՐ ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Э. Г. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ–ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.) .. 252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ 255

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ 258

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021) 263

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 266

INFORMATION ABOUT THE AUTHORS 267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 268

NOTICE FOR THE AUTHORS 268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 269

Դավիթ Բարսեղյան

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հիմնաբառեր. Իրան, Իսլամական հեղափոխություն, զինված ուժեր, ԻՀՊԿ, Բասիջ, Ղոդս, ռազմական դոկտրին:

1979 թ. Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո Իրանը մինչ օրս շարունակում է մի շարք առումներով փակ երկիր մնալ: Իշխող վարչակարգի անվտանգության և պետության պաշտպանունակության նպատակով ցանկացած ինֆորմացիա նախքան հասանելի դառնալը ենթարկվում է հատուկ քննության: Այս հանգամանքով է պայմանավորված Իրանի զինված ուժերի մասին գիտական հետազոտությունների փոքր քանակը: Աշխատանքը նվիրված է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ուսումնասիրությանը և նպատակ ունի պարզելու դրա նշանակությունը երկրում կայունության ապահովման գործում:

Պետության պաշտպանական ներուժը կարելի է սահմանել որպես հասարակության նյութական, հոգևոր և կազմակերպչական կարողությունների համախումբ, որը հնարավոր է օգտագործել պետության կենսագործունեության ապահովման կամ որոշակի նպատակների իրականացման համար: Իսկ դա առաջին հերթին ենթադրում է անհրաժեշտ զինված ուժեր՝ այն առավելագույնս մոբիլիզացնելու հնարավորությամբ, և ռեսուրսներ՝ պատերազմի նպատակներին հասնելու կամ պետության պաշտպանունակության ապահովման համար: Այս առումով՝ Իրանն իր պաշտպանական ներուժով Մերձավոր և Միջին Արևելքի առանցքային դերակատարներից է: Մերձավորարևելյան տարածաշրջանում, հատկապես՝ Իրանի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական լարված իրավիճակի համապատկերում Իրանի զինված ուժերի, մասնավորապես՝ դրա առանցքային բաղադրիչը հանդիսացող Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) ուսումնասիրությունը թույլ կտա գնահատել այս կառույցի հնարավորությունները և նշանակալիությունն Իրանի պետական կառավարման համակարգում:

1979 թ. փետրվարի 11-ին տեղի ունեցավ 20-րդ դարի կարևորագույն իրադարձություններից մեկը. Իրանում տապալվեց շահական վարչակարգը, և սրանով պարսից 2500-ամյա միապետությունը դադարեց գոյություն ունենալ: 1979 թ. ապրիլի 1-ին հռչակվեց Իրանի Իսլամական Հանրապետությունը: Իրանական պաշտպանական համակարգի կառուցվածքային, նորմատիվային առանձնահատկությունները բխում են այդ երկրի կրոնաքաղաքական համակարգից՝ իրենց վրա կրելով Իսլամական հեղափոխության ուղղակի ազդեցությունն ու գաղափարախոսությունը: Իրանական ԶՈՒ-ի կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ դրանք կրում են խիստ կրոնական ազդեցություն և համարվում Իսլամական հեղափոխության պահպանության կարևոր բաղադրիչներից, այսինքն՝ ԶՈՒ-ը պատասխանատու են նաև երկրի կրոնական կարգի պաշտպանության համար[1]:

Շահական վարչակարգի տապալումից հետո իսլամական ղեկավարությունը մեծ ջանքեր էր գործադրում մի կողմից իր հսկողության տակ պահելու համար բանակը, մյուս կողմից՝ ապահովելու նրա մարտունակությունը: Հենց այս ժամանակ էր, որ իսլամական հեղափոխությունն ստացավ առաջին ծանր հարվածը՝ 1980 թ. Իրաքի հարձակումը: Պատերազմը մեծ ազդեցություն ունեցավ իրանական ռազմական մտածողության և անգամ հոգևոր էլիտայի վրա[2]: Շուրջ 8 տարի տևած իրան-իրաքյան պատերազմում հաղթող ու

* Հոդվածը ներկայացվել է 11.06.2021 թ., գրախոսվել՝ 19.06.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

[1] *Сажин В., Бондарь Ю., Военная мощь Исламской Республики Иран, Москва, 2014, с. 204.*

[2] *Byman D., Chubin Sh., Ehteshami A., Green J. D.. Iran's Security Policy in the Post-Revolutionary Era: https://www.rand.org/pubs/monograph_reports/MR1320.html մուտք՝ 09.05.2020*

պարտվող կողմ չեղավ: Համազորային մարտի դրսևորման առումով վերջին մեծ պատերազմն էր, որտեղ բոլոր զորատեսակները համապատասխան կիրառություն ունեցան: Անցկացվեցին ռազմական բարեփոխումներ հենց պատերազմի պայմաններում[1]:

Միանշանակ է, որ լիովին հենվել բանակի վրա, որն ինքնին սերտորեն կապված էր շահական վարչակարգի հետ, իրանական հոգևորականությունը չէր կարող և չէր ցանկանում: Իրան-իրաքյան պատերազմը դարձավ հզոր իմպուլս՝ ակտիվացնելու ռազմական շինարարությունը հետհեղափոխական Իրանում: Դրա համար պաշտպանական ներուժից շեշտը դրվեց բարոյաքաղաքական բաղադրիչի վրա: Շիական ղեկավարությանը հաջողվեց կրոնագաղափարական, հոգեբանական ազդեցությամբ մարդկային գործոնը վերածել դիմադրության և հաղթանակի հիմնական աղբյուրի: Այդ առաքելությունը դրվեց Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի վրա, որը ստեղծվել էր 1979 թ. մայիսին[2]: Կորպուսի մարտիկների թիվը հասնում էր շուրջ 10.000-ի, որոնք իրանական երիտասարդության ներկայացուցիչներ էին՝ իսլամական հեղափոխության գաղափարների և իմամ Խոմեյնիի նվիրյալներ: Սկզբնական շրջանում ԻՀՊԿ-ն ոստիկանական ռազմականացված միավորում էր և ղեկավարվում էր բանակից անկախ: Այն կազմավորվել է իսլամական կոմիտեների ջոկատների հիման վրա: Այս էլիտար միավորի առաջ դրված էր իսլամական հեղափոխության արժեհամակարգի առաջնորդման և պահպանության գաղափարական և քաղաքական առումներով կարևորագույն խնդիրներ, որը գործնականում նշանակում է իրանական հետաքրքրությունների ապահովում Մերձավոր Արևելքում և ողջ աշխարհում: Փաստորեն, իրան-իրաքյան պատերազմի առաջին ամիսներին շիա հոգևորականությունն ԻՀՊԿ-ի առջև բացեց լայն քաղաքական, ռազմական, կազմակերպչական, պատժիչ հնարավորություններ և նախանշեց այն ճանապարհը, որով ԻՀՊԿ-ն դարձավ ԻԻՀ կանոնավոր զինված ուժերի հիմնական գործոնը[3]: Հեղափոխությանը հաջորդած 10 տարիների ընթացքում ԻՀՊԿ-ն վերածվեց հզոր կանոնավոր միավորման՝ դառնալով Իրանի ԶՈՒ-ի կարևոր բաղադրիչ: Կորպուսի թվաքանակը հասավ 310.000-ի[4]: Կազմավորվեցին նաև կորպուսի ցամաքային, ռազմաօդային և ռազմածովային ուժերի սեփական մոդելները: Ավելի ուշ ԻՀՊԿ-ի ենթակայության տակ մտցվեցին նաև «Բասիջ» աշխարհազորային և դիվերսիոն հետախուզական հատուկ նշանակության «Ղոդս» ուժերը[5]:

Կորպուսի վրա դրված խնդիրները բխում են Իրանի ռազմական դոկտրինից[6]: Իրանի ժամանակակից ռազմական դոկտրինի ու ԶՈՒ-ի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեցավ իրան-իրաքյան պատերազմը: Ավելի ուշ Իրանի ղեկավարությունը ռազմական դոկտրինի վերասահմանման համար յուրացրեց 2003 թ. իրաքյան և 2006 թ. Իսրայելի ու Հեզբոլլահի միջև պատերազմի դասերը[7]: Իրանական բանակը զուտ տեխնոլոգիական առումով զիջում էր հիմնական հակառակորդներ ԱՄՆ-ին և Իսրայելին, ուստի Թեհրանն իր հարաբերական թուլությունը փոխհատուցելու համար ռազմական դոկտրինի հիմքում դրել է «անհամաչափ պատասխանի» և գործողությունների ռազմավարությունը՝ օգտագործելով թանկարժեք կանխարգելիչ միջոցառումներ: Իրանի պաշտպանական մարտավարության առաջին բաղադրիչը «հարձակողական պաշտպանությունն է» (forward defense): Այն

---

[1] *Հովհաննիսյան Ա., Ռազմարվեստի զարգացումը 20-րդ դարում.հեռանկարները, Երևան, 2017, էջ 262*

[2] *Alemzadeh M., The Informal Roots of the IRGC and the Implications for Iranian Politics Today, https://www.academia.edu/40270301/The_Informal_Roots_of_the_IRGC_and_the_Implications_for_Iranian_Politics_Today մուտք՝ 09.05.2020*

[3] *Сажин В., Бондарь Ю., с. 204.*

[4] *Барабанов М., Йешильташ М., Лавров А., Ломов Н., Лямин Ю., Нерсисян Л., Никольский А., Серен М., Топчий И., В ожидании бури: Южный Кавказ. Центр анализа стратегий и технологий, 2018, с. 143.*

[5] *Сажин В., Корпус стражей исламской революции Ирана – государство в государстве. https://www.ogt-journal.com/jour/article/view/22/21 մուտք՝ 09.05.2020*

[6] *Сажин В., Бондарь Ю., с. 184.*

[7] *Հովսեփյան Լ., Հովհաննիսյան Ա., Մինասյան Ս., Տարածաշրջանի ռազմական տեղեկագիրք, Երևան, 2016, էջ 73:*

ներառում է տարածաշրջանային դաշինքների և միությունների օգտագործումը («դիմադրության առանցք»՝ axis of resistance)՝ որպես լծակ, որը նպատակ ունի թուլացնելու, կանխարգելելու կամ ոչնչացնելու Իրանի թշնամիներին իր իսկ տարածքից դուրս: Այդ դաշինքների թվում են Լիբանանյան Հեզբոլլահը (թարգմանաբար՝ «աստծո կուսակցություն»), Եմենի հութի ապստամբները, «Պաղեստինի իսլամական ջիհադը» և այլն, որոնք իրենց հերթին տեղերում ունեն սեփական հետաքրքրությունները: Այսպիսով, Իրանը հարակից տարածաշրջաններում հսկայական ռեսուրսների հաշվին փորձում է իր հակառակորդների համար զգայուն հիմնախնդիրների հարցում առավելություն ապահովել: Իրանն իր պաշտպանական համակարգի առաջին բաղադրիչը զուգորդում է երկրորդ բաղադրիչի՝ իր զինանոցի կարճ, միջին և միջանկյալ հեռավորության բալիստիկ հրթիռների կիրառմամբ հարակից տարածաշրջաններում ամերիկյան ենթակառուցվածքների չեզոքացման և վնաս հասցնելու մարտավարության հետ: Իրանի պաշտպանական համակարգի զսպման մեխանիզմներից է համաշխարհային տնտեսությունը շոկի ենթարկելու կարողությունը: Սրանով Իրանը սպառնում է կասեցնել նավթի հոսքը հնարավոր կոնֆլիկտի դեպքում: Նշենք, որ նավթի համաշխարհային մատակարարման 1/5 մասն անցնում է Հորմուզի նեղուցով՝ Պարսից և Օմանի ծոցերի միջով: Այս պարագայում Իրանն ունակ է կիրառել ծովային այնպիսի մարտավարություն, երբ թշնամական նավերի ճանապարհը կփակվի բավականին էժան, ճարպիկ, փոքր ականակիր նավերով[1]: Նմանատիպ քաղաքականություն կարող է վարվել Եմենում՝ հաշվարկելով, որ հնարավոր կոնֆլիկտի դեպքում «Ղոդս» զորքերը և հութի զինյալ աջակիցները կարող են փակել ապրանքների փոխադրումը Կարմիր ծովով՝ Բաբ-Էլ-Մանդեբի նեղուցով, որտեղով անցնում է համաշխարհային նավթի սպառման 4%-ը: Ներկայացվածից հասկանալի է, որ այս հայեցակարգում առկա նպատակների իրագործումը դրված է ԻՀՊԿ-ի վրա, քանզի, ինչպես արդեն ասել ենք, տարածաշրջանում իր ներկայությունն ընդլայնելու նպատակով Իրանի ղեկավարությունը «Ղոդս» ուժերը դիտարկում է իբրև կարևորագույն գործիք: Ստորաբաժանման հրամանատարը Իսմայիլ Ղաանին է (նա փոխարինել է 2020 թ. հունվարի 3-ին սպանված գեներալ-մայոր Ղասեմ Սոլեյմանիին): ԻՀՊԿ «Ղոդս» ուժերի գործառույթներից է իրանամետ ուժերի օժանդակությունն ամբողջ աշխարհում, հատուկ նշանակության գործողությունների իրականացումը, ռազմավարական և օպերատիվ հետախուզական ցանցի ստեղծումը և դրա ղեկավարումը, հակառակորդի թիկունքում իսլամի մարտիկների պատրաստումը՝ ռազմական գործողությունների ժամանակ դիվերսիոն-հետախուզական առաջադրանքներ կատարելու համար[2]: «Ղոդս» ուժերը հատուկ երկրների համար ունեն տարբեր սեկցիաներ՝ Ռամազան կորպուսը՝ Իրաքում, Լևանտի կորպուսը՝ Սիրիայում, Լիբանանում, Հորդանանում, Իսրայելում, Ռասուլալլահ կորպուսը՝ Արաբական թերակղզում, Անսար կորպուսը՝ Աֆղանստանում: Այս ուժերն օգնում են Իրանին ընդլայնվել Պարսից ծոցից դեպի Միջերկրականի արևելք: «Ղոդս» ուժերն ունեն նաև ակտիվ զարգացող կիբեր հնարավորություններ[3]: Իրանը մեծապես օգտագործում է իր հետախուզությունը, դիվանագետներին և կցորդներին, «մասնավոր» քաղաքացիներին, բիզնես ծածկույթը և օտարերկրյա քաղաքացիներին՝ ի նպաստ անհամաչափ պատասխանի և քաղաքական պայքարի ջանքերին՝ ուսումնասիրելու ԱՄՆ-ի հնարավորություններն ու խոցելիությունը: Հենց այսպիսի նշանակության գործողությունների համար է ստեղծվել «Ղոդս» ստորաբաժանումը: Վերոշարադրվածը ենթադրում է նաև տարբեր տեղային շարժումների օգտագործումը և դաշինքների ստեղծումը: Որոշ զեկույցներից հայտնի է դառնում, որ «Ղոդս»-ի բյուջեն ձևավորվում և ուղղակիորեն վերահսկվում է հոգևոր առաջնորդ Ալի Խամենիի

[1] *Chase Winter. Iran's military power: What you need to know. https://www.dw.com/en/irans-military-power-what-you-need-to-know/a-43756843 մուտք՝ 09.05.2020*

[2] *Бондарь Ю., Специальные службы Ирана, http://www.iimes.ru/?p=17164 մուտք՝ 09.05.2020*

[3] *Jones S., War by Proxy. Iran's Growing Footprint in the Middle East. https://csis-prod.s3.amazonaws.com/s3fs-public/publication/190311_IranProxyWar_FINAL.pdf մուտք՝ 09.05.2020*

գրասենյակի կողմից[1]: «Ղոդս» ուժերն ունեն իրենց գրասենյակները կամ «բաժինները» իրանական շատ դեսպանություններում, որոնք փակ են անգամ դեսպանատան անձնակազմի համար: Հայտնի չէ, թե արդյոք նրանք կապ ունեն Իրանի հետախուզության հետ, և արդյոք տվյալ դեսպանն ունի վերահսկողություն կամ գոնե տեղեկացված է «Ղոդսի» իրականացրած գործողություններից: Սակայն կան հստակ տեղեկություններ, որ շատ գործողություններ կոորդինացվում են ԻՀՊԿ-ի և Արտաքին գործերի նախարարության միջոցով[2]:

ԻՀՊԿ-ի կազմում առանձնահատուկ կարևորություն ունի Օդատիեզերական ուժերի հրամանատարությունը: Այն վերակազմավորվել է ԻՀՊԿ-ի ՌՕՈՒ-ի բազայի վրա: Զորատեսակի հիմքը ավիացիոն և հրթիռային զորքերն են, որոնց կազմում են երկրի գերագույն գլխավոր հրամանատարի անմիջական ենթակայության տակ գտնվող և երկրի պաշտպանական ներուժի համար ռազմավարական նշանակություն ունեցող «Շահաբ» դասի «երկիր-երկիր» բալիստիկ հրթիռները[3]: Այստեղ տեղին է նաև հիշատակել, որ սույն թվականի ապրիլի 22-ին ԻՀՊԿ-ին հաջողվեց ուղեծիր դուրս բերել Իրանի առաջին ռազմական արբանյակը, որը կրում է «Նուռ» (լույս) անունը: Արբանյակը տեղակայված է երկրի մակերևույթից 425 կմ բարձրության վրա[4]: Այլ մանրամասներ դեռևս հայտնի չեն:

«Բասիջ» (պարսկերենից թարգմանաբար՝ մոբիլիզացում) ժողովրդական աշխարհազորը կազմակերպչական առումով նույնպես գտնվում է ԻՀՊԿ-ի կազմում: Իրանի սահմանադրության 151-րդ հոդվածի համաձայն՝ «կառավարությունը պարտավոր է քայլեր ձեռնարկել և պլան մշակել իսլամական սկզբունքներին ու նորմերին համապատասխան բոլոր քաղաքացիների համար ռազմական պատրաստություն անցկացնելու ուղղությամբ, որպեսզի նրանք մշտապես պատրաստ լինեն երկրի և իսլամական կարգերի զինված պաշտպանությանը»[5]: Այսպես՝ աշխարհազորի հիմնական նշանակությունն առաջին կարգի պաշտպանական պահեստազորի ձևավորումն է պատերազմի ժամանակ, բանակի և ԻՀՊԿ-ի համալրումը, քաղաքացիական անձանցից մեծաքանակ մոբիլիզացիոն հնարավորությունների ապահովումը: «Բասիջ» ժողովրդական աշխարհազորը ստեղծվել է 1980 թ., և դրա առաջին զորամիավորումները ցույց են տվել իրենց նվիրվածությունն արդեն իրան-իրաքյան պատերազմի ընթացքում: Հենց նրանց էր վերապահված «մարդկային ալիքի» դերը: Իսլամի նվիրյալների այսօրինակ գործողություններն էին հանդիսանում հաղթանակի լրջագույն գործոններից մեկը: Պատերազմի ավարտից հետո «Բասիջ»-ն ստացավ նոր հանձնարարություններ: Խաղաղ ժամանակներում վերջինիս վրա դրված են կանոնավոր քարոզչության իրականացումը բնակչության տարբեր հատվածների շրջանում՝ նպատակ ունենալով համալրել բասիջականների շարքերը: Երկրի բոլոր նահանգներում գործում են «Բասիջ»-ի գումարտակներ ու կառավարման օպերատիվ կենտրոններ՝ ԻՀՊԿ կադրային սպաների ղեկավարությամբ[6]: «Բասիջ»-ի սպառազինությունն ու անհրաժեշտ միջոցներն ապահովվում են ԻՀՊԿ-ի կողմից: Իրանի ռազմական դոկտրինում «Բասիջ»-ին կարևոր տեղ է հատկացված արտաքին ագրեսիայի դեպքում, որ պետք է կազմակերպի առաջնահերթ դիմադրությունը: Նրան է վերապահված նաև Իրանի քաղաքացիների գործունեության շրջանում մոնիտորինգի իրականացումը[7]: Սա ենթադրում է, որ բասիջականները ներ-

---

[1] *Cordesman A., The Gulf Military Balance, CSIS 2014, p. 147.*

[2] *Նույն տեղում, էջ 159-162:*

[3] *Сажин В., Бондарь Ю., с. 342.*

[4] *ICT Min upbeat with putting into orbit of first military satellite, https://en.irna.ir/news/83760836/ICT-Min-upbeat-with-putting-into-orbit-of-first-military-satellite մուտք՝ 09.05.2020*

[5] *Конституция Исламской Республики Иран, https://worldconstitutions.ru/?p=83 մուտք՝ 09.05.2020*

[6] *Сажин Б., Силы сопротивления «Басидж» исламской республики Иран. http://war1960.ru/vs/basidg.shtml մուտք՝ 09.05.2020*

[7] *Cordesman A., Arleigh A., Chai B., Iran's Developing Military Capabilities. https://csis-prod.s3.amazonaws.com/s3fs-public/legacy_files/files/media/csis/pubs/041208_irandevmilcap%5B1%5D.pdf մուտք՝ 09.05.2020*

գրավված են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և, ըստ էության, ունեն նաև հակահետախուզական որոշակի գործառույթներ: Ուշագրավ է, որ վերջին տարիներին Իրանի քաղաքներում տեղի ունեցող տարբեր ցույցերի ժամանակ երկրի ռազմաքաղաքական ղեկավարությունը ցուցարարների դեմ դուրս է բերում հենց «Բասիջ»-ին[1]: Այդպես, փաստորեն, բանակը և ԻՀՊԿ-ն ուղղակիորեն չեն խառնվում այդօրինակ գործողություններին, ինչը թույլ է տալիս զերծ պահել այս կառույցները տարբեր տեսակ շահարկումներից, մանիպուլյացիաներից, ժողովրդի գիտակցության մեջ չաղավաղել այդ կառույցների դեմքը, չթուլացնել զինծառայողների բարոյահոգեբանական վիճակը:

Այսպիսով՝ Իրանի ռազմաքաղաքական ղեկավարությանը հաջողվել է քաղաքացիական բնակչությունից ստեղծել զինվորական վերապատրաստման կենտրոնացված համակարգ, որն ուղեկցվում է կրոնագաղափարական քարոզներով: Սրանով ընդլայնվում են նաև երկրի պահուստային հնարավորությունները, որոնք Իրանում բավական բարձր մակարդակի վրա են. իրան-իրաքյան պատերազմի ժամանակ տոտալ մոբիլիզացիայի պայմաններում հնարավոր եղավ ՀՈՒ-ի թվաքանակը հասցնել 10 մլն-ի (բնակչության 20%-ը)[2]:

1989 թ. Հաշեմի Ռաֆսանջանին, ով հանդիսանում է ԻՀՊԿ հայրերից մեկը, երկրի նախագահ դառնալուց հետո բախվեց ԻՀՊԿ-ի քաղաքական մեծ հավակնություններին: Փորձելով ամեն գնով նվազեցնել այն՝ Ռաֆսանջանին Կորպուսի ուժերն ուղղեց այլ ոլորտ՝ պատերազմից տուժած ռազմական ենթակառուցվածքների վերականգնմանը: Հայտնի է, որ ԻՀՊԿ-ն ինժեներական աշխատանքների մեծ փորձ էր կուտակել պատերազմի 8 տարիների ընթացքում: Կորպուսի վերահսկողության տակ անցան կամ ստեղծվեցին հզոր կազմակերպություններ և ներդրումային ֆոնդեր: Փաստացի ԻՀՊԿ-ի ձեռքում կենտրոնացել էր Իրանի տեքստիլ արտադրության 27%-ը, ցեմենտի արտադրության 22%-ը, ոչ ալկոհոլային խմիչքների 45%-ը, շաքարի արտադրության 25%-ը և այլն: Կորպուսի ուժը բավարարում է գրեթե ցանկացած գործարքի հակադարձելու և իր ցանկացած ձևով խնդիրը լուծելու համար: Ասվածի օրինակ է Իմամ Խոմեյնիի անվան նոր միջազգային օդանավակայանի ղեկավարման հարցը, որը, ըստ նախնական պայմանավորվածության, պետք է տնօրինվեր թուրք-շվեյցարական կոնսորցիումի կողմից, բայց ԻՀՊԿ-ի ուժայինները պարզապես գրավեցին կառույցը և ստիպեցին, որ այն կառավարվի սեփական հոլդինգի կողմից[3]: Կարող ենք տեսնել, որ տարբեր տարիներին ԻՀՊԿ ներկայացվածությունը պետական կառավարման մարմիններում տարբեր է: 2006 թ. միջուկային ծրագրի հետ կապված Իրանի հանդեպ կիրառվող միջազգային ֆինանսատնտեսական պատժամիջոցները և հատկապես 2011 թ. ԱՄՆ-ի և ԵՄ-ի սահմանած պատժամիջոցներն ստեղծեցին այնպիսի դրություն, երբ ԻՀՊԿ-ի ազդեցությունն ավելի մեծացավ երկրի տնտեսական-քաղաքական կյանքում: Այն պայմաններում, երբ օտարերկրյա ներդրումները նվազեցին, Իրանի ղեկավարությունը խաղադրույք արեց ներքին ուժերի վրա: ԻՀՊԿ-ը շատ հարմար և կենսունակ էր այս տեսակ խնդիրների լուծման համար: Վերջինիս հետ պայմանագրեր ստորագրվեցին մետրոյի, նավթատարների կառուցման և այլ ծրագրերի իրականացման համար: Հենց ԻՀՊԿ-ի միջոցով էին անցնում անօրինական ֆինանսական հոսքերը: Շատ կարևոր տնտեսական կառույցներ անցան ԻՀՊԿ-ի ղեկավարման ներքո: Այստեղից պարզ է դառնում, որ միջուկային ծրագրի շրջանակում միջազգային պայմանագրերը, կարգավորումները և կոմպրոմիսները ԻՀՊԿ-ի համար անբարենպաստ են համարվում: Տնտեսական էքսպանսիայի արդյունքում ԻՀՊԿ-ը հասավ Իրանի տնտեսության 25-35%-ի վերահսկողությանը[4]:

---

[1] *Армия и власть на Ближнем Востоке. М., 2002, с. 321-322, http://book.iimes.su/wpcontent/uploads/2002/r2002sbor_1.pdf մուտք՝ 09.05.2020*

[2] *Сажин В., Бондарь Ю., с. 199.*

[3] *Сажин В., Корпус стражей исламской революции Ирана – государство в государстве. https://www.ogt-journal.com/jour/article/view/22/21 մուտք (09.05.2020)*

[4] *Նույն տեղում:*

Այսպես եթե դիտարկենք այս կառույցը Իրանի պետական կառավարման համակարգի առավել խորքային ընդգրկմամբ, ապա այն պետություն է պետության մեջ, բանակ՝ բանակի մեջ, կառույց, որի ազդեցությունը թե՛ Իրանում, թե՛ Իրանից դուրս բավական մեծ է: Այն փաստացի Իրանի՝ չերևացող ռազմական ներկայությունն ապահովող գլխավոր դերակատարն է Սիրիայում, Լիբանանում, Իրաքում, Եմենում և ընդհանրապես ողջ Մերձավոր Արևելքում: Ի տարբերություն բանակի, որի քաղաքական ակտիվություն դրսևորելը քիչ հավանական է, ԻՀՊԿ-ն ներկայացված է Իրանի քաղաքական և տնտեսական կյանքում: Այն մնում է իրանական վարչակարգի ուժային հուսալի հենարաններից մեկը: Այս փաստը արևմտյան որոշ տեսաբաններին հիմք է տալիս կարծելու, որ Խամենեիի մարտավարությունը կարճ ժամանակի համար կարող է աշխատել, և ընդդիմության ճնշումն ու ռադիկալ մոտեցումները բերելու են վարչակարգի փոփոխության՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գերագույն առաջնորդի հենարանը ԻՀՊԿ-ն է: Սակայն ԱՄՆ-ի կողմից ԻՀՊԿ-ն ահաբեկչական կառույց ճանաչելու փաստը մեծացնում է կառույցի տնտեսական և քաղաքական ազդեցությունը Իրանում: Այս որոշումը բերելու է նրան, որ երկրում պահպանողականների հենարան ԻՀՊԿ-ն պահանջելու է ավելի կոշտ քաղաքականություն ԱՄՆ-ի հանդեպ, իսկ հնարավոր բախումները, անկախ դրանց ելքից, Իրանում բնակչության ավելի մեծ մոբիլիզացիա կառաջացնեն: Թեև Իրանի ռազմաքաղաքական տարբեր ղեկավար օղակների միջև առկա են տարաձայնություններ, երբեմն հենց դրանց միջև հակասություններ ցուցադրելով՝ Իրանը կարող է խուսավարել միջազգային տարբեր անցանկալի պայմաններում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Իրանը ներքաղաքական կայունության ապահովման մեջ մեծ տեղ է հատկացնում ռազմական բաղադրիչին: Տարբեր ներքաղաքական լարումները, որոնք մեծ մասամբ հրահրվում են արտաքին ուժերի կողմից, հանդիպում են Իրանի ղեկավարության զսպվածությանն ու հավասարակշռված քայլերին: Անհամաչափ պատասխանի ռազմավարության տրամաբանության մեջ Իրանին հաջողվում է իր համար չափազանց մեծ կարևորություն ունեցող հարցերում լուրջ հաջողություններ գրանցել: Ավելին, կանխելով իր շուրջ սեղմվող ռազմաքաղաքական օղակը՝ Իրանը կարողանում է առաջ անցնել իր հակառակորդներից և իր անուղղակի ռազմական ներկայությունն ապահովել Իսրայելի հետ սահմաններին, քանի որ Իրանի ղեկավարությունը կարողացել է պաշտպանական համակարգի տարրերը՝ պետության ռազմական, գիտատեխնիկական, տնտեսական և բարոյահոգեբանական ներուժը, հասցնել իր համար անհրաժեշտ մակարդակի:

Давит Барсегян, ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ. После победы исламской революции в 1979 году, Иран остается закрытой страной. Любая информация, прежде чем она становится доступной, подвергается тщательной проверке для защиты безопасности правящего режима и государства. Работа посвящена изучению Корпуса стражей исламской революции и направлена на определение их важности для обеспечения стабильности в стране.

Ключевые слова: Иран, Исламская революция, вооружённые силы, КСИР, Басидж, Кудс, военная доктрина.

Davit Barseghyan, THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY. After the victory of the Islamic Revolution in 1979, Iran continues to be a closed country for a number of reasons. In order to ensure the security of the ruling regime and the security of the state, any kind of information is subject to special examination before it becomes available. This is the reason for the small number of scientific researches on the Iranian armed forces. The work is dedicated to the study of Islamic Revolutionary Guard Corps and aims to determine their significance in ensuring stability in the country.

Keywords: Iran, Islamic revolution, armed forces, IRGC, Basij, military doctrine.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200